Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 24 դեկտեմբերի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Բաղալյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Սարգսյանը, Կ. Ալեյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյանը

Մասնակից ընկերության կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Հեղեղատարների մաքրման և կարգավորման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի 12.12.2024 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերով մասնակիցներ «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասնակից «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ն շտկմամբ չի ներկայացրել հրավերով պահանջվող լիցենզիայի ներդիրը: Ներկայացված Հավելված 3-ում նշված չեն ներգրավված մասնագետների կատարած աշխատանքները, ժամանակահատվածները և գործատուների անվանումը: Ներկայացված չէ Տիգրան Խեչոյանի անձնագիրը:

Հանձնաժողովի որոշումը

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերով (այդ թվում շտկմամբ) ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով հրավերի 8.10 կետը՝ մասնակից «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊԸ-ի 4-րդ չափաբաժնի համար ներկայացված հայտը մերժել:
2. ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների ընտրված մասնակից հայտարարել «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին:
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով ընթացակարգի 4-րդ չափաբաժնի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/15-Ն ծածկագրով ընթացակարգի 3-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների ընտրված մասնակից «ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ-0
Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Է. Բաղալյան
անդամներ	_____	Կ. Սարգսյան
	_____	Կ. Ալեյան
	_____	Ս. Աբազյան
Քարտուղար	_____	Ս. Գալստյան